ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan
Tel.: +37410 527081
Fax: +37410 569281
E-mail: academy@sci.am

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Հեռ.՝ +37410 527081,
Ֆաքս՝ +37410 569281
Էլ.փոստ՝ academy@sci.am

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24.
Тел.: +37410 527081,
Факс: +37410 569281
Эл.почта: academy@sci.am

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11>> ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Գիտությունների Ազգային Ակադեմիայի գլխավոր մասնաշենք, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24, 1-ին հարկ գործերի կառավարչության բաժին, ոչ ուշ քան 2014թ. ապրիլի 28-ը, ժամը 10:00-ին:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի գնումների համակարգող Ա.Պետրոսյանը (հեռ. 010568531):

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար զանգահարել՝ Ս. Մնոյան (հեռ. 010568531):

Հայտերը կբացվեն Գիտությունների Ազգային Ակադեմիայի գլխավոր մասնաշենքում, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24, 1-ին հարկ գործերի կառավարչության բաժնում 2014թ. ապրիլի 28-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԳԱԱ կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերումը:

ՀՀ ԳԱԱ կարիքների համար՝ տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների (որը կազմված է 61 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ԳԱԱ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner@sci.am

Հարգանքով՝ ՀՀ ԳԱԱ Գործերի կառավարիչ

Գ. Սնգրյան

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3

ք. Երևան «____» _____ 2014թ.

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիան, ի դեմս նախագահ Ռ. Մարտիրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Գնորդ/, մի կողմից, և _____-ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցները (այսուհետև՝ Ապրանք) և Ապրանքը հանձնել Գնորդի՝ ք. Երևան, Մ.Բաղրամյան 24 հասցեում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ..... (.....) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ Ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված

հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ---- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած ---- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ	**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա ք.Երևան, Մ. Բաղրամյան 24 ՀՎՀՀ 00005673 Զարգացման Հայկական Բանկ Հ/Հ 1810000040670100	---------- ---------- ---------- ---------- **(ստորագրություն)**
_____ (ստորագրություն) Կ.Տ	

Հավելված 1
“.....” ..... 2014թ. կնքված N ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	քանակը
1.	Սպասքի մաքրման հեղուկ	Սալահատակի մաքրող միջոց գունավորիչի հոտով և գույնով, մաքրող ունակությունը՝ ոչ պակաս 100%, 450մլ տարայով: «Նաշ Սադ» կամ համարժեք:	հատ	30
2.	Լվացող նյութեր	Զուգարանակոնքի մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրեասպան, 500մլ «Դոմեստոս»ֆիրմայի կամ համարժեք:	հատ	45
3.	Լվացող նյութեր (գորգերի համար)	Գորգ մաքրող հեղուկ 300մլ տարաներում «Զոլուշկա» կամ համարժեքը:	լիտր	60
4.	Լվացքի փոշի (ձեռքի)	450գ տարողությամբ տուփերով, «Թայդ Քոլոր» գունավոր շորերի համար կամ համարժեք:	հատ	75
5.	Լվացքի փոշի (ավտոմատ)	450գ տարողությամբ տուփերով, «Թայդ Ավտոմատ» **սպիտակեղենի համար կամ համարժեք:**	հատ	40
6.	Սպունգ	Սպունգ սպասք լվանալու համար: «Վիլեդա» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	120
7.	Օճառ	չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍՏ 28546-2002 : **ՏԵՕ կամ համարժեք**	Հատ	460
8.	Օճառի տարրա	Օճառի դիսպենսեր, մետաղյա, հեղուկ օճառու համար	հատ	6

9.	Հեղուկ օճառ	Հեղուկ օճառ, օճառի դիսպենսեր լիցքավորելու համար	լիտր	100
10.	Հեղուկ օճառ	Հեղուկ օճառ, 330մլ (տեսականի) «Նաշ Սադ» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	50
11.	Հատակի շոր	Ստանդարտ չափի հատակ մաքրելու շոր	հատ	100
12.	Հատակ մաքրելու ձող	Հատակ մաքրելու ձողափայտ, ցանկացած փայտից	հատ	20
13.	Կահույքի փայլեցման միջոց	Փայլեցնող միջոց, փայտյա կահույքի համար	հատ	50
14.	Ախտահան ման միջոց	Փոշի մաքրող ունակությամբ,500գ տարողությամբ տարայով, «Ռախշա» կամ համարժեք:	հատ	130
15.	Ապակի մաքրող հեղուկ	Մաքրող միջոց ապակե մակերևույթների համար, փոշեցրիչով, 500մլ «Բարֆ» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	150
16.	Ժավել	Սպիտակեցնող և ախտահանող հատկություններով հեղուկ, ակտիվ քլորի պարունակությունը 90, 120 կամ 150 կգ/մ^3 կամ համարժեքը	լիտր	100
17.	Տնտեսական ձեռնոց	Շինարարական աշխատանքների համար, տարբեր չասերի:	հատ	100
18.	Ռետինե ձեռնոց	Տնտեսական ձեռնոցներ« ռետինե անհարթ մակերեսով հեշտ օգտագործման համար, մեծ չափսերի:	հատ	120
19.	Անձեռոցիկ	Անձեռոցիկ սեղանի 100 հատ,երկշերտ,ուղղանկյուն տուփի մեջ, չափսը՝ 15 x 4.7 x 11 սմ, «Կլեոպատրա» ֆիրմայի կամ համարժեք:	տուփ	600
20.	Սեղանի շոր	Փոշի մաքրելու գործվածք 20 x 20սմ չափի:	հատ	100
21.	Զուգարանի ախտահանում	Զուգարանի հոտը հեռացնող ստիկեռ:	հատ	150
22.	Զուգարանի թուղթ	Գլանափաթեթի լայնությունը՝ 90-110մմ, գլանված թղթի երկարությունը՝ 65մ, արտասահմանյան արտադրության՝ «Օբուխով» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	2500
23.	Զուգարանի թուղթ	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ «Սելպակ» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	60
24.	Հոտազերծող միջոց	Դեզադոր 300մլ, պատրաստված բնական նյութերից, որոնք արագ հեռացնում են տհաճ հոտերը, «Գլեյդ» ֆիրմայի կամ համարշժեքը:	հատ	50

25.	Ցախավել	Բակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (700-800) գ, երկարությունը՝ (85-90) սմ, ավլող մասի լայնքը (50-60) սմ	հատ	40
26.	Ավել	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ	հատ	50
27.	Գոգաթիակ	Պլաստմասսայից՝ տարբեր գույների, , ՀՍ 124-2007 կամ համարժեքը	հատ	20
28.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 48մմx100մմ տնտեսական, մեծ	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍ 20477-86	հատ	60
29.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 19մմx36մմ գրասենյակային,փոքր	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ, ԳՕՍ 20477-86	հատ	60
30.	Երկկողմանի ժապավեն	Գլանափաթեթված ժապավեն, երկկողմանի կպչուն	հատ	20
31.	Աղբի տոպրակ (մեծ)	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ 100 լիտր տարողությամբ ըստ ԳՕՍ 10354-82 կամ համարժեք	հատ	30
32.	Աղբի տոպրակ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ 70 լիտր տարողությամբ ըստ ԳՕՍ 10354-82 կամ համարժեք	հատ	120
33.	Երկարացման լար	Էլեկտրական հաղորդիչներ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ, հաղորդալարի երկարությունը վարդակային մասի մուտքից մինչև խրոցը 10մ, դիմադրողականությունը’ 16Ա «Մակել» ֆիրմայի կամ համարժեքը:	հատ	5
34.	Երկարացման լար	Էլեկտրական հաղորդիչներ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ, հաղորդալարի երկարությունը վարդակային մասի մուտքից մինչև խրոցը 5 մ, դիմադրողականությունը’ 16Ա «Մակել» ֆիրմայի կամ համարժեքը:	հատ	15
35.	Երկարացման լար	Էլեկտրական հաղորդիչներ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ, հաղորդալարի երկարությունը վարդակային մասի մուտքից մինչև խրոցը 3 մ, դիմադրողականությունը’ 16Ա «Մակել» ֆիրմայի կամ համարժեքը:	հատ	15
36.	Հեռախոսի լար	<<TRPKA>> կամ համարժեք ֆիրմայի 2 կոնտակտային	մետր	1000

37.	Հեռախոսի լսափողի լար	<<TRPKA>> կամ համարժեք ֆիրմայի 4 կոնտակտային,հեռախոսի վարդակից միացնելու լար:	մետր	200
38.	Հեռախոսի տուփ	1 տեղանոց վարդակ, հեռախոսի լար միացնելու համար, 4 կոնտակտանի	հատ	50
39.	Հեռախոսի տուփ	2 տեղանոց վարդակ, հեռախոսի լար միացնելու համար, 4 կոնտակտանի	հատ	15
40.	Կոնեկտոր հեռախոսի համար	RG-12	Տուփ/ 100	2
41.	Կոնեկտոր հեռախոսի համար	RG-11	Տուփ/ 100	2
42.	Կոնեկտոր համակարգչ ի համար	RG-45	մետր	200
43.	UTP լար	Համակարգչի համար, ցանցային լար	մետր	200
44.	Լամպ - 150W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 150Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”:	հատ	1000
45.	Լամպ - 100W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	1150
46.	Լամպ - 60W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե	հատ	1150
47.	Լամպ - 50W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե	հատ	150

48.	Էկոնոմ լամպ - 40W	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ, ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99	հատ	60
49.	Մարտկոց	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	120
50.	Հոսանքի ապահովիչ	Էլեկտրո ապահովիչ 100/250Ա	հատ	40
51.	Հատակ մաքրելու խոզանակ	1,5-2 մ երկարության փայտե կամ պլաստմասսայե, լաքապատված:	հատ	30
52.	Եռաբաշխիչ	Նախատեսված (220-250) Վ հոսանքի լարման , մինչև 6 Ա հզորության	հատ	40
53.	Անջատիչ	Էլեկտրական անջատիչ արտասահմանյան արտադրության, «Մակել» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	20
54.	Վարդակ	Էլեկտրական վարդակ դիմադրողականությունը 16Ա «Մակել» ֆիրմայի կամ համարժեք:	հատ	70
55.	Լվացքի պարան	Մետաղյա պարան ,	մետր	50
56.	Սեղանի ծածկոց	Կլինկորից, 1.60x2մ	հատ	15
57.	Սեղանի ծածկոց	Կտորից 1.60x2մ	հատ	15
58.	Դույլ (10լ)	Պլաստմասսայե, 5-10 լ տարողության, ՀՍՏ 124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի	հատ	5
59.	Մաստիկա	Հատակի մաստիկա բոլոր տոսակի հատակների փայլեցման և պահպանման համար, բարձր որակի լցված 2.5կգ պոլիմերային տարաների մեջ, «CROWN chemical» ֆիրմայի կամ համարժեքը: Պահպանման ժամկետը 5 տարի:	հատ	100
60.	Ծաղկաման (մեծ)	Ծաղկաման պլաստմասե փոքր չափսերի,10լ տարողությամբ:	հատ	4

61.	Ծաղկաման (փոքր)	Ծաղկաման պլաստմասե փոքր չափսերի,3լ տարողությամբ:	հատ	4

Ապրանքի տեղափոխումն իրականացնում է Վաճառողը:
Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
ք.Երևան, Մ. Բաղրամյան 24
ՀՎՀՀ 00005673
Զարգացման Հայկական Բանկ
Հ/Հ 1810000040670100

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
“.....” ..... 2014թ. կնքված N ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N Չ/Բ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Գնման ենթակա ապրանքների քանակները և մատակարարման ժամկետները								Ընդամենը	
			I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
1	*2*	*3*	*4*		*5*		*6*		*7*		*8*	
			քանակ	*գումար*	*քանակ*	*գումար*	*քանակ*	*գումար*	*քանակ*	*գումար*	*քանակ*	*գումար*
1.	Սպասքի մաքրման հեղուկ	հատ			**10**		**10**		**10**		**30**	
2.	Լվացող նյութեր	հատ			**15**		**15**		**15**		**45**	
3.	Լվացող նյութեր (գորգերի համար)	լիտր			**20**		**20**		**20**		**60**	
4.	Լվացքի փոշի (ձեռքի)	հատ			**25**		**25**		**25**		**75**	
5.	Լվացքի փոշի (ավտոմատ)	հատ			**20**		**10**		**10**		**40**	
6.	Սպունգ	հատ			**40**		**40**		**40**		**120**	
7.	Օճառ	Հատ			**160**		**150**		**150**		**460**	
8.	Օճառի տարրա	հատ			**6**						**6**	
9.	Հեղուկ օճառ	լիտր			**40**		**30**		**30**		**100**	
10.	Հեղուկ օճառ	հատ			**20**		**15**		**15**		**50**	
11.	Հատակի շոր	հատ			**40**		**30**		**30**		**100**	
12.	Հատակ մաքրելու ձող	հատ			**10**		**5**		**5**		**20**	
13.	Կահույքի փայլեցման միջոց	հատ			**20**		**15**		**15**		**50**	
14.	Ախտահան ման միջոց	հատ			**50**		**40**		**40**		**130**	

15.	Ապակի մաքրող հեղուկ	հատ			**50**		**50**		**50**		**150**	
16.	Ժավել	լիտր			**40**		**30**		**30**		**100**	
17.	Տնտեսական ձեռնոց	հատ			**40**		**30**		**30**		**100**	
18.	Ռետինե ձեռնոց	հատ			**40**		**40**		**40**		**120**	
19.	Անձեռոցիկ	տուփ			**200**		**200**		**200**		**600**	
20.	Սեղանի շոր	հատ			**40**		**30**		**30**		**100**	
21.	Զուգարանի ախտահանում	հատ			**50**		**50**		**50**		**150**	
22.	Զուգարանի թուղթ	հատ			**900**		**800**		**800**		**2500**	
23.	Զուգարանի թուղթ	հատ			**30**		**15**		**15**		**60**	
24.	Հոտազերծող միջոց	հատ			**20**		**15**		**15**		**50**	
25.	Ցախավել	հատ			**15**		**15**		**10**		**40**	
26.	Ավել	հատ			**20**		**15**		**15**		**50**	
27.	Գոգաթիակ	հատ			**10**		**5**		**5**		**20**	
28.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 48մմx100մմ տնտեսական, մեծ	հատ			**25**		**20**		**15**		**60**	
29.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 19մմx36մմ գրասենյակային,փոքր	հատ			**25**		**20**		**15**		**60**	
30.	Երկկողմանի ժապավեն	հատ			**20**						**20**	
31.	Աղբի տոպրակ (մեծ)	հատ			**30**						**30**	
32.	Աղբի տոպրակ	հատ			**40**		**40**		**40**		**120**	
33.	Երկարացման լար	հատ			**5**						**5**	
34.	Երկարացման լար	հատ			**5**		**5**		**5**		**15**	
35.	Երկարացման լար	հատ			**5**		**5**		**5**		**15**	

36.	Հեռախոսի լար	մետր			**1000**						**1000**	
37.	Հեռախոսի լսափողի լար	մետր			**200**						**200**	
38.	Հեռախոսի տուփ	հատ			**20**		**15**		**15**		**50**	
39.	Հեռախոսի տուփ	հատ			**15**						**15**	
40.	Կոնեկտոր հեռախոսի համար	Տուփ/ 100			**2**						**2**	
41.	Կոնեկտոր հեռախոսի համար	Տուփ/ 100			**2**						**2**	
42.	Կոնեկտոր համակարգչի համար	մետր			**200**						**200**	
43.	UTP լար	մետր			**200**						**200**	
44.	Լամպ - 150W	հատ			**400**		**300**		**300**		**1000**	
45.	Լամպ - 100W	հատ			**400**		**400**		**350**		**1150**	
46.	Լամպ - 60W	հատ			**400**		**400**		**350**		**1150**	
47.	Լամպ - 50W	հատ			**150**						**150**	
48.	Էկոնոմ լամպ - 40W	հատ			**30**		**15**		**15**		**60**	
49.	Մարտկոց	հատ			**120**						**120**	
50.	Հոսանքի ապահովիչ	հատ			**40**						**40**	
51.	Հատակ մաքրելու խոզանակ	հատ			**10**		**10**		**10**		**30**	
52.	Եռաբաշխիչ	հատ			**20**		**10**		**10**		**40**	
53.	Անջատիչ	հատ			**20**						**20**	
54.	Վարդակ	հատ			**30**		**20**		**20**		**70**	
55.	Լվացքի պարան	մետր			**50**						**50**	
56.	Սեղանի ծածկոց	հատ			**15**						**15**	

57.	Սեղանի ծածկոց	հատ			**15**						**15**	
58.	Դույլ (10լ)	հատ			**5**						**5**	
59.	Մաստիկա	հատ			**40**		**30**		**30**		**100**	
60.	Ծաղկման (մեծ)	հատ			**4**						**4**	
61.	Ծաղկման (փոքր)	հատ			**4**						**4**	

/ՀՀ դրամ/

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
ք.Երևան, Մ. Բաղրամյան 24
ՀՎՀՀ 00005673
Զարգացման Հայկական Բանկ
Հ/Հ 1810000040670100

_____
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)

Հավելված 3
“.....” ..... 2014թ. կնքված N ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 01, խումբ 04, դաս 01,)

Ապրանքի Անվանումը	**I եռամսյակ**			**II եռամսյակ**			**III եռամսյակ**			**IV եռամսյակ**			**Ընդամենը**
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպ.**	**Հոկ.**	**Նոյ.**	**Դեկ.**	
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ					40%	40%	70%	70%	70%	100%	100%	100%	100%

**** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով***

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
ք.Երևան, Մ. Բաղրամյան 24
ՀՎՀՀ 00005673
Զարգացման Հայկական Բանկ
Հ/Հ 1810000040670100

_____
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)

Հավելված 4
“.....” ..... 2014թ. կնքված N ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3
ծածկագրով պայմանագրի

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

,__ ,_____ 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ _____ 2014թ.

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս_____ և Վաճառողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը<__> <_____> 2014թ-ից <__> <_____> 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի համառոտ նկարագիրը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ապրանքի մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ապրանքի մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն_____	ազգանուն_____
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 5

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<ՇՀԱՊՁԲ---/--->>

ք. Երևան <<_____>>_____2014 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է Գիտությունների Ազգային Ակադեմիայի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «Տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միջոցների» <<ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ - 11/11-14/3>> ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միջոցների» <<ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/3>> գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------թվերով------ (------տառերով------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն

համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ._____-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

</>

<ԿՀ<<

տնօրեն՝ ----------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------

(ստորագրություն)

Կ.Տ

Օրինակելի ձև

Հավելված N 1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
«ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Գիտությունների Ազգային Ակադեմիայի կողմից N «ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3» ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված N2
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
« ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «ԳԱԱ-ՇՀԱՊՁԲ-11/11-14/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ----------ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	**Գնման առարկայի անվանումը**	**Արժեք***	**ԱԱՀ****	**Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը** /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1.	Սպասքի մաքրման հեղուկ			
2.	Լվացող նյութեր			
3.	Լվացող նյութեր (գորգերի համար)			
4.	Լվացքի փոշի (ձեռքի)			
5.	Լվացքի փոշի (ավտոմատ)			
6.	Սպունգ			
7.	Օճառ			
8.	Օճառի տարրա			
9.	Հեղուկ օճառ			
10.	Հեղուկ օճառ			
11.	Հատակի շոր			
12.	Հատակ մաքրելու ձող			
13.	Կահույքի փայլեցման միջոց			
14.	Ախտահան ման միջոց			
15.	Ապակի մաքրող հեղուկ			
16.	Ժավել			
17.	Տնտեսական ձեռնոց			
18.	Ռետինե ձեռնոց			
19.	Անձեռոցիկ			
20.	Սեղանի շոր			
21.	Զուգարանի ախտահանում			
22.	Զուգարանի թուղթ			
23.	Զուգարանի թուղթ			
24.	Հոտազերծող միջոց			
25.	Ցախավել			

26.	Ավել			
27.	Գոգաթիակ			
28.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 48մմx100մմ տնտեսական, մեծ			
29.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 19մմx36մմ գրասենյակային,փոքր			
30.	Երկկողմանի ժապավեն			
31.	Աղբի տոպրակ (մեծ)			
32.	Աղբի տոպրակ			
33.	Երկարացման լար			
34.	Երկարացման լար			
35.	Երկարացման լար			
36.	Հեռախոսի լար			
37.	Հեռախոսի լսափողի լար			
38.	Հեռախոսի տուփ			
39.	Հեռախոսի տուփ			
40.	Կոնեկտոր հեռախոսի համար			
41.	Կոնեկտոր հեռախոսի համար			
42.	Կոնեկտոր համակարգչի համար			
43.	UTP լար			
44.	Լամպ - 150W			
45.	Լամպ - 100W			
46.	Լամպ - 60W			
47.	Լամպ - 50W			
48.	Էկոնոմ լամպ - 40W			
49.	Մարտկոց			
50.	Հոսանքի ապահովիչ			
51.	Հատակ մաքրելու խոզանակ			
52.	Եռաբաշխիչ			
53.	Անջատիչ			
54.	Վարդակ			
55.	Լվացքի պարան			
56.	Սեղանի ծածկոց			
57.	Սեղանի ծածկոց			
58.	Դույլ (10լ)			
59.	Մաստիկա			
60.	Ծաղկաման (մեծ)			
61.	Ծաղկաման (փոքր)			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 2014թ.

(ամսաթիվը, ամիսը)